



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

« 06 » *օգոստոսի* 2013թ.

թիվ 673-Ձ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐԾԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԸ ԵՎ ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ  
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 120-րդ կետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել հանձնման-ընդունման արձանագրության ձևը՝ համաձայն հավելված N 1-ի և «հավելված N 1-ով սահմանված հանձնման-ընդունման արձանագրության ձևի լրացման պահանջները»՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2003 թվականի հոկտեմբերի 14-ի «Հանձնման-ընդունման արձանագրության ձևը և դրա լրացման պահանջները հաստատելու մասին» N 786-Ն հրամանը:
3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրվանից:

Դ. Սարգսյան

Հավելված N 1

«Ֆինանսների նախարարի  
2013 թվականի օգոստոսի 6-ի  
N 673-Ն հրամանի

Կատարող

Պատվիրատու

գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_

գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_

հվհ \_\_\_\_\_

հվհ \_\_\_\_\_

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<< \_\_\_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ \_\_\_\_\_

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ << \_\_\_\_\_ >> << \_\_\_\_\_ >> 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ ի դեմս \_\_\_\_\_ և

Կատարողը՝ ի դեմս \_\_\_\_\_,

հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը \_\_\_\_\_ 20\_\_թ-ից \_\_\_\_\_ 20\_\_ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

Ազգանուն, Անուն  
Կ.Տ.

Ազգանուն, Անուն  
Կ.Տ.

Հավելված N 2

ՀՀ Ֆինանսների նախարարի  
2013 թվականի օգոստոսի 6-ի  
N 673 -Ն հրամանի

ԼՐԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1-ՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ»

Հավելված N 1-ով սահմանված՝ Հանձնման-ընդունման արձանագրության ձևը լրացվում է հետևյալ կերպ՝

- <Պատվիրատուն՝ ի դեմս> տողում լրացվում է պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը և անուն ազգանունը,

- <Կատարողը՝ ի դեմս> տողում լրացվում է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձի պաշտոնը և անուն ազգանունը,

- Սյունակի <Գնման առարկայի անվանումը> բաժինը լրացվում է պայմանագրից բաղկացած նշված ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը:

- Սյունակի <Գնման առարկայի քանակական ցուցանիշը> բաժինը լրացվում է պայմանագրով նախատեսված և տվյալ ժամանակահատվածում փաստացի ձեռք բերված ապրանքների, կատարված աշխատանքի և մատուցված ծառայության քանակական ցուցանիշները, ըստ գնումների պլանի:

- Սյունակի <Աշխատանքների կատարման ժամկետը> բաժնում նշվում է ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության համար պայմանագրով նախատեսված համապատասխան ժամկետը:

- Սյունակի <Վճարման ենթակա գումարը> բաժնում նշվում է տվյալ ժամանակահատվածում փաստացի մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի և մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը:

- Սյունակի <Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)> բաժնում նշվում է տվյալ ժամանակահատվածի համար փաստացի մատակարարված ապրանքի, կատարված աշխատանքի և մատուցված ծառայության դիմաց վճարման ժամանակացույցով նախատեսված ամսաթիվը:

- ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետարան ներկայացնելիս, չի ներկայացվում հանձնման-ընդունման արձանագրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հաշիվ-ապրանքագրերը: